# ՀԱՒԱՏԱՐԻՄ ԱՄԷՆ ԲԱՆԻ ՄԷՋ
## FAITHFUL IN ALL THINGS
**(ՆԵԵՄ. 7:1-5)**

---

## ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ
**Նեեմ. 6:15-16 - 15 Եւ պարիսպը լրացաւ Իլուլի քսանեւհինգին՝ հիսունեւերկու օրվա մէջ: 16 Եւ երբոր մեր բոլոր թշնամիները լսեցին, վախեցան մեր շուրջը գտնուող բոլոր ազգերը. եւ շատ ցածրացան իրանց աչքերի առաջին եւ իմացան, որ մեր Աստծուց եղավ այս բանը:**

## ԲԱՆԱԼԻ ԽՈՍՔ.
**Faithfull - հավատարմություն – which occurs 127 times in 125 verses in the Hebrew concordance of the KJV**

**Firmness - կայունություն, Truth - ճշմարտություն, reliability - վստահելիությունը,**

**Ծննդ. 42:16 -** 16 Ձեզանից մէկին ուղարկեցէք ձեր եղբօրը բերելու, եւ դուք կբանտարկուիք, որ ձեր խօսքերը փորձուին, թէ արդեօք ձեզանում **ճշմարտութիւն** կա՞. Եւ եթէ ոչ, Փարաւօնի կեանքը վկա է որ դուք լրտեսներ էք:

**Թվ. 12:7 -** 7 Բայց այնպէս չէ իմ ծառան Մովսէսը, որ իմ բոլոր տան մէջ **հավատարիմ է.**

## ԲԱՆԱԼԻ ԽՈՍՔ.
**(Նեեմ. 7:1-5 )**

1 Երբ պարսպի շինութիւնն ավարտվեց, եւ ես դրեցի նրա դռները, եւ դռնապաններ ու
երգեցողներ եւ Ղեւտացիներ նշանակուեցին, 2 Իմ եղբայր Անանիին եւ աշտարակի իշխան
Անանիային, որ **ՀԱՎԱՏԱՐԻՄ** մարդ է եւ **Աստուածանից երկիւղած** ավելի քան թէ
շատերը, պատուիրեցի Երուսաղէմի մասին, 3 Եւ ասեցի նորանց. Դռները շուտ չբացէք մինչեւ
արևի ծագելը, եւ քանի դեռ բոլորն **արթուն կը լինեն,** թող դռները ծածկուած մնան, փակ
զցելով ամրացուեն դրանք, դռների վրա պահապաններ կանգնեն, հսկեն Երուսաղէմի
բնակիչներին՝ ամէն մարդ իր ժամին եւ ամէն մարդ իր տան դիմացը:
4 Եւ քաղաքը մեծ է եւ ընդարձակ, իսկ ժողովուրդը՝ քիչ. եւ տուներ շինուած չէր: 5 Եւ իմ
Աստուածն իմ **սիրտը զցեց,** որ ժողովեմ իշխաններին, ոստիկաններին եւ ժողովրդին որ
արձանագրուին, եւ մի ազգաբանության գիրք գտա առաջին անգամ գերութիւնից եկողների
մասին: Նրա մէջ գրուած էր այսպէս. 6 Սրանք են անուններն այն իսրայէլացիների, որոնք
ելան գերութիւնից, որոնց պանդխտեցրել էր Բաբելոնի թագաւոր Նաբուքոդոնոսորը, եւ
որոնք վերադարձան Երուսաղէմ եւ Հրէաստան՝ ամէն մարդ իր քաղաքը:

## I. ՀԱՎԱՏԱՐՄՈՒԹՅՈՒՆԸ # 1 ՈՐԱԿՆ Է ՑԱՆԿԱՑԱԾ ԱՍՏԾՈ ԾԱՌԱՅԻ:

*2 Իմ եղբայր Անանիին եւ աշտարակի իշխան Անանիային, որ **հավատարիմ** մարդ է եւ Աստուածանից երկիւղած աւելի քան թէ շատերը, **պատուիրեցի** Երուսաղէմի մասին.*

**Senator said 'How can you bear the load without being crushed?' Mother Teresa replied, 'My dear Senator, I am not called to be successful, I am called to be faithful.'**

**1 Կոր. 4:2 -** 2 Արդ տնտեսների մէջ այն է պահանջվում որ մէկը հավատարիմ գտնուի: not say “sucqessful. հաջողակ

**Ժող. 9:10 -** 10 Ամեն ինչ որ ձեռքդ գտնէ անելու՝ ուժովդ արա, որ գործք, խորհուրդ, գիտութիւն եւ իմաստութիւն չկա միյուս աշխարհում, ուր որ դու պիտի գնաս:

**Մատ. 25:21 -** 21 Տէրն էլ ասեց նորան. Լա՜վ, բարի եւ հավատարիմ ծառա, քիչ բաների վրա հավատարիմ էիր, ես քեզ շատ բաների վրա կդնեմ. մտիր քո տիրոջ ուրախութիւնը:

1. **Հիսուսն հայտնի էր իր հավատարմությամբ.**

**Հայ. 1:5 -** 5 Եւ Յիսուս Քրիստոս **հավատարիմ վկան,** որ մեռելներից անդրանիկը՝ եւ երկրի թագաւորների իշխանն է.

**Հայ. 3:14 -** 14 Եւ Լաւոդիկէի եկեղեցու հրեշտակին գրիր. Սա է ասում Ամէնը, **հաւատարիմ** եւ ճշմարիտ Վկան, Աստուծոյ արարածների Սկիզբը:

**Հայ. 19:11 -** 11 Եւ տեսա երկինքը բացուած, եւ ահա մի սպիտակ ձի, եւ նա որ նորա վերայ նստած էր, կոչվում էր **Հաւատարիմ եւ Ճշմարիտ,** եւ արդարութիւնով է դատաստան անում եւ պատերազմում:

2. **Աստծո հավատարմությունը մեզ մաքրում է**

**1 Հով. 1:9 -** 9 Իսկ եթէ **խոստովանենք** մեր մեղքերը, **հավատարիմ է նա** եւ արդար՝ մեր մեղքերը մեզ ներելու եւ մաքրելու համար մեզ ամէն անիրավութիւնից:

**Ողբ. 3:22-23 -** 22 Անսպառ են Տիրոջ ողորմութիւնները, նրա գթութիւնները չեն նուազում. 23 Նորանք ամեն առաւօտ նորանոր են. մեծ է քո հավատարմութիւնը:

## II. ՀԱՎԱՏԱՐՄՈՒԹՅՈՒՆԸ ՕՐՀՆՈՒԹՅԱՆ ԵՒ ՀԱՂԹԱՆԱԿԻ ԲԱՆԱԼԻՆ Է:

*1 Երբ պարսպի շինութիւնն աւարտվեց, եւ ես դրեցի նրա դռները, եւ **դռնապաններ** ու **երգեցողներ** եւ **Ղեւտացիներ** նշանակուեցին.*

**Strategy-Ստրատեգիա:** 3 Եւ ասեցի նորանց. **Դռները** (զգայարանները) **շուտ չբացէք** մինչեւ արեւի ծագելը, եւ քանի դեռ բոլորն արթուն կը լինեն, թող դռները ծածկուած մնան, **փակ գցելով** ամրացուեն դրանք, դռների վրա **պահապաններ կանգնեն,** իսկեն Երուսաղէմի բնակիչներին՝ **ամէն մարդ իր ժամին** եւ ամէն մարդ իր **տան դիմացը:**

**Նեեմ. 7:45 -** 45 **138 դռնապաններ:** (պահապաններ)

**Նեեմ. 11:19 -** 19 Եւ դռնապանները որ պահպանում էին դռները, **172-էին**:

**Մատթ. 12:43-45** 43 Եւ երբոր պիղծ ոգին դուրս է ելնում մարդուց, շրջում է անջուր վայրերում,
հանգիստ խնդրելով, եւ չէ գտնում: 44 Այն ժամանակ ասում է, Ետ դառնամ իմ տունը՝ որտեղից
դուրս եկայ, եւ գալիս է ու այն գտնում է դատարկ, մաքրված եւ կարգի պերուած: 45 Այն
ժամանակ գնում և վերցնում է իրանից աւելի չար եօթը այլ ոգիներ և մտնում բնակվում է
այնտեղ. Եւ այդ մարդու վերջը լինում է ավելի չար, քան թէ առաջ էր. Այսպէս կ'լինի եւ այս
չար ազգին **(սերունդին)**:

1. **Յսկեք դարպասները ձեր սրտի. աչքերը, ականջները, բերանը. Թույլ մի տվեք որ թշնամին ներս մտնի.**

   **Առակ. 4:23 -** 23 Ամենայն զգուշութեամբ պահի՛ր եւ պահպանի՛ր քո սիրտը, որովհետեւ նրանից է բխում կեանքի աղբյուրը:

2. **Մեր վերստին ծնված օրից Սուրբ Յոգին դարձավ մեր դռնապան.**

   **1 Յով. 4:4 - 4** Դուք Աստուածանից էք, որդեակներ, եւ հաղթեցիք նորանց. որովհետեւ ավելի մեծ է նա որ ձեզանում է, քան թէ նա որ աշխարհիքիս մէջ է:

3. **Երգն ու փառաբանությունը վանում է ամբողջ դիվային.**

   **Նեեմ. 7:67 -** 67 Եւ նորանց հետ երկու հարյուր քառասունեւհինգ երգիչներ եւ երգչուհիներ կային:

   **Եփ. 5:18-21 -** 18 Եւ մի արբենաք գինով, որ նորանում անառակութիւն կա, այլ
   լցուեցէք Յոգով, 19 Խօսելով ձեր մէջ սաղմոսներով եւ օրհնութիւններով եւ հոգեւոր
   երգերով, երգեցէք եւ սաղմոսեցէք ձեր սրտերումը Տիրոջը: 20 Ամեն ժամանակ ամեն
   բանի համար գոհացէք Աստուածանից եւ Յօրիցը՝ մեր Տէր Յիսուս Քրիստոսի
   անունովը: 21 Իրար հնազանդ եղէք Աստուծո վախովը:

## III. ՅԱՎԱՏԱՐԻՄ ՄԱՐԴԿԱՆՑ ԹԻՎՆ ՈՒ ԱՆՈՒՆՆԵՐԸ:

1. **Կարեւորությունը թվերի:**

   **Նեեմ. 7:8-9 -** 8 Փարոսի որդիները երկու հազար հարյուր եոթնասունեւերկու. 9
   Սափատիայի որդիները երեք որդիները եօթանասունեւերկու.

   **Նեեմ. 7:66 -** 66 Բոլոր ժողովուրդը մէկտեղ **42,360** հոգի էր:

   **Յայ. 7:9-10 -** 9 Եւ սորանցից յետոյ տեսայ, եւ ահա մի շատ ժողովուրդ որ ոչ ոք չէր
   կարող համարել, ամեն ազգից եւ ցեղերից եւ ժողովուրդներից եւ լեզուներից,
   կանգնած աթոռի առաջին եւ Գառի առաջին, եւ սպիտակ հանդերձներ հագած, եւ
   իրանց ձեռքերումն արմաւեններ. 10 Եւ աղաղակում էին բարձր ձայնով եւ ասում.
   Փրկութիւնը մեր Աստուծուն, որ նստում է աթոռի վրա, եւ Գառին:

2. **կարեւորությունը անունների.**
**Ես. 49:16 -** 16 Ահա ես իմ **<u>ձեռքի մէջ եմ նկարագրել քեզ</u>**, քո պարիսպները իմ դիմացն են միշտ:

**Ղուկ. 10:20 -** 20 Սակայն նորա համար մի ուրախանաք՝ որ ոգիները ձեզ հնազանդում են, բայց առաւել ուրախացէք, որ ձեր անունները գրուած են երկնքումը:

**Հայ. 20:15 -** 15 Եւ եթէ մէկը գրուած չ՚գտնուեցաւ կեանքի գրքի մէջ, կրակի լճի մէջ գցուեցաւ:

## ԱՄՓՈՓՈՒՄ

## I. ՀԱՎԱՏԱՐՄՈՒԹՅՈՒՆԸ # 1 ՈՐԱԿՆ Է ՑԱՆԿԱՑԱԾ ԱՍՏԾՈ ԾԱՌԱՅԻ:

## II. ՀԱՎԱՏԱՐՄՈՒԹՅՈՒՆԸ ՕՐՀՆՈՒԹՅԱՆ ԵՒ ՀԱՂԹԱՆԱԿԻ <u>ԲԱՆԱԼԻՆ Է</u>:

## III. ՀԱՎԱՏԱՐԻՄ ՄԱՐԴԿԱՆՑ ԹԻՎՆ ՈՒ ԱՆՈՒՆՆԵՐԸ: